ԳԱՌԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԱՆԱՍԱՐԸ ԳՆԱՑ ՍԱՐԸ



ՀԱՅԿՈՍՏՐԿԱՏ

Тетрадь Каменской п/б фабрики им. С М Кирова.
Мособлгорлит В 3 - 262926
Каменск п/о фабрика им. С. М. Кир

30 MAY 2011

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԱՆԱՍԱՐԸ ԳՆԱՑ ՍԱՐԸ



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
— Բ Ա Ժ Ի Ն —
ԵՐԵՎԱՆ 1949

Շապիկը և իլուստրացիաները
նկարիչ՝ Վ. ԹԵՎԱՆՅԱՆԻ

В. ГРИГОРЯН

САНАСАР УЕХАЛ В ГОРЫ

(На армянском языке)

Армгиз. Ереван, 1949

1

Քնից եկավ Մարոն սիրուն,
Ասաց՝— Տատիս շատ եմ սիրում։
Առնի լինճ ու Սանասարին,
Գնանք հասնենք էն մեծ սարին։

Էն մեծ սարին, հեռու սարին,
Ձյունը կիսված սուր կատարին։
Ամպը գլխին նայում է ցած,
Պապի նման հոնքը կիտած։

Հայրը գրկեց իր աղջկան,
Ուրախացավ՝— Լավ, Մարո ջան,
Ես գնում եմ, մի քիչ հետո
Ձեր եռևից կգա ավտոն։

Ու համբուրեց նա Մարոյին,
Հետո դարձավ Սանասարին.
— Դե, երեխեք, մնաք բարով,
Մի քիչ հետո կգա Վալոն։

Ավտոն սուլեց, կանգնեց դռան,
Ծափ տվեցին, վեր-վեր թռան:
— Դե՛հ, Սանասար, ու՞ր է տատին,
Դուռն է ծեծում Վաղո քեռին:

Ու երկուսով վազ տվեցին,
Ուրախ-ուրախ դուռը բացին։
— Ներս համեցեք, քեռի Վասո,—
Ճամփա տալով ասաց Մարոն։

Ու ներս եկավ շոֆեր քեռին,
Ծանր նստեց բազկաթոռին։
— Մինչև ծխեմ, դե՛հ, երեխեք,
Լավ հագնված, պատրաստ եղեք։

3

Ավտոն ցնցվեց, ավտոն դռռաց,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ։
— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՜ն, հեյ ջա՜ն,
Սլանում ենք ծտի նման։

Այսպես ասաց, փարվեց տատին.
— Ճամփա ավե՛ք մեր ավտոյին,
Գնանք հասնենք հեռու սարին,—
Լսվեց ձայնը Սանասարի։

Անցան նրանք փողոց ու տուն,
Եկան հասան մինչև Զանգուն։
Խոր ձորի մեջ ադմուկ, շառաչ,
Գետն է խաչում, վազում առաջ։

Սիրան է թնդում Սանասարի.
Զզվում է դուրս, որ լավ նայի։
— Ո՞վ է, ասաի, այնտեղ ձորում,
Աղմկում է ու գոռգոռում։

— Վա՛յ, տեսեք մի, չի հասկանում,
Այդ Զանգուն է այդպես հոսում։
— Ոչի՞նչ, Մարո, մի՛ պարմանա,
Դեռ չի տեսել, փոքրիկ է նա...



Ինչավ տեղից տատը բարի.
— Դե, խենթուկս, չուտ ցած արի։
Նայի՛ր, ահա, սա է Զանգուն
Որ հոսում է ու աղմկում։

Եվ իսկապես, ձորի մեջ խոր,
Փրփրակալած, տեսքն տհալոր,
Նեղ ափերից մեջքը ուռած,
Հոսում է ցած՝ խիստ թափ առած։

Տղան հանկարծ հարց է տալիս.
— Որտեղի՞ց է Զանգուն գալիս...
Դրկում է տատն իրա թոռան
Եվ պատմում է այսպես նրան.

— Գալիս է նա հեռո՛ւ տեղից,
Ծո՛վ Սևանից, սարի՛ց, ձորի՛ց։
Չէ՞ որ նա է մեր տներում
Դիշեր–ցերեկ լույսեր վառում։

Զարդն է պայծառ Երևանի,
Շունչն ու հոգին գործարանի։

Նրա ուժից անվերջ, անթիվ,
Պտտվում են վոկ ու անիվ։

— Ո՞ւր է գնում, տատի, Զանգուն։
— Քեզ պես ուրա՛խ, քեզ պես խնդո՛ւն
Նա վազում է հոսում վարար,
Որ չմնա հանդը ծարավ։

Ջուր է տանում նա արտերին,
Մեր պտղատու այգիներին
Եվ հողերին չոր ու խոպան,
Որ կանաչեն, առատ բերք տան։

4

Ավտոն ցնցվեց, ավտոն դղրդաց,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ։
— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՛ն, հեյ ջա՛ն,
Սլանում ենք ծի նման։

Օրորվում է ավտոն, հևում,
Այգիներն են շուրջը բուրում...
Ծառե՛ր, ծառե՛ր, անվերջ ծառե՛ր,
Կանաչ հովտից մինչև լեռներ։

Ամենից շատ Սանասարին,
Դուր է գալիս կեռասենին.
Ճանապարհին գլուխը կախ,
Անցորդին է նայում ուրախ։

Հենված բարձր ցանկապատին,
Կանաչ-կանաչ չորերն հաղին,
Տարածվելով շուրջն ահագին,
Զով է անում ընկուզենին։

Կանգնած մոտիկ մի բացատում,
Կանչում է լու–ձեռքով անում,
Խոնարհվելով մինչև գետին,
Գեղեցկատես խնձորենին:

Օրորվում է ուրում, ավտոն,
Շուրջն այգիներ գեղեցկաթով:
— Մի քիչ կանգնենք, տատ իմ անգին,
Ես տեսնել եմ ուզում այգին:

Իջավ տեղից տատը բարի.
— Դե, խենթուկս, չուտ ցած արի՛:
Նայի՛ր ինչքան սիրուդ կուզի,
Այգիներին մեր կոլխոզի,
Որ տալիս են երկրին գինի,
Մրգեր անուշ և հյութալի:



Կանգնած էր մեկն այդու դռան,
Թևերը կուռ, ամբամկան։
Երբ որ տեսավ Սանասարին,
Ասաց։— Փոքրիկ, այտուղեղ արի,
Արի՛, արի՛ համեցիր ներս,—
Ասաց քեռին մեր ժպտերես։

Ուրախ վազեց Սանասարը
Դեպ կեռասի հասած ծառը։
Իսկ մեր Մարոն լուռ, ամոթխած,
Մնացել էր հեռու կանգնած։

— Չի ամաչում, տատի, տեսա՞ր,
Էս ի՞նչ տեսակ տղա է սա...
— Ոչի՞նչ, Մարո, մի՛ բարկանա,
Չի հասկանում, փոքրիկ է նա։

Սանասարը մի քիչ հետո,
Վերադարձավ ուրախ ու զոհ։
Նայում է չուրջն ու ծիծաղում,
Բռնած ձեռքից հսկա քեռու։

5

Ավտոն ցնցվեց, ավտոն դուռաց,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ։
— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՞ն, հեյ ջա՞ն,
Սլանում ենք ծտի նման։

Օրորվում է ավտոն, հևում,
Այգիները թողին հեռվում։
Լայն գորգի պես նախշուն ու բաց,
Դաշտն է փռվել նրանց դիմաց։

Դաչտը կանաչ, դաչտը պե՛ս-պե՛ս։
— Վա՛յ, տատի ջան, էս ի՞նչ է, տես...



Իջավ տեղից տատը բարի·
— Դե, խենթուկս, չուտ ցած արի՛,
Նայի՛ր ինչքան սիրտդ կուզի
Բոստաններին մեր կոլխոզի,
Որ տալիս են այնքան բազում,
Բանջարեղեն՝ գազա՛ր, բազո՛ւկ։
Ա՛յ, սա սեխ է, սա՝ ձմերուկ,
Սա էլ, գիտես, կանաչ վարո՛ւնգ։

Հեռվում կանգնած մի ջահել կին·
Եկավ դրկեց Սանասարին։
— Ի՞նչ լավիկն ես դու բալիկ ջան,
Դնանք մեզ մոտ, մի քիչ ման գանք։

Եվ նրանց հետ լուռ շարժվեցին,
Մեր ժիր Մարոն և իր տատին։

— Նայի՛ր, նայի՛ր, վայ, տատի ջան,
Մորաքույրներ տես ինչքա՜ն կան։

Հազած շորեր նախշո՛ւն-նախշո՛ւն,
Զրուցում են ու աշխատում։
Մեկն էլ կամաց երգ է ասում.
— Ջա՜ն, ինչ լավ է կանաչ դաշտում։

Իսկ ծառերի տակ զովասուն
Մանուկները երգ են ասում։
Նոտած զուլալ առվի ափին,
Նրանց է լուռ նայում պապին...

Ու հավաքված աղջիկ ու կին,
Մեջտեղ առան մեր փոքրիկին։
Հետո հերթով գրկած նրան,
Դեպի ավտոն ուրախ տարան։

Անուշ մրգեր բերին նրան,
Հասած սալո՛ր, կարմիր ծի՛րան։
Ու ասացին Սանասարին.
— Անո՛ւշ տղա, շո՛ւտ-շո՛ւտ արի։

— Շնորհակալ ենք,— ասաց Մարոն,—
Մենք գնում ենք, մնաք բարով։

— Շնորհակալ ենք,— տատին ասավ,—
Թող ձեր մեկը դառնա հազար...

6

Ավտոն ցնցվեց, ավտոն գնաց,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ։

— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՜ն, հեյ ջա՜ն,
Սլանում ենք ծալի նման։

Օրորվում է ավտոն, հևում,
Մի փոքրիկ գյուղ է երևում։
Բակերը լայն, ծառապատված,
Եվ հյուրընկալ դռները բաց։

Ելավ դեմից, թեթև ու ժիր,
Մի մորաքույր կուժը ուսին։
Սանասարը ասաց խնդուն.
— Ես ծարավ եմ, ջուր եմ ուզում։

Իջավ տեղից տատը բարի.
— Դե, խենթուկս, չուտ ցած արի՛։
Խմի՛ր ինչքան սիրտդ կուզի,
Պաղ ջրերից մեր կոլխոզի,
Որ հոսում են գիշեր ու զօր,
Զուլա՛լ-զուլա՛լ ու այնքան զով։

Ու ջուր խմեց մանուկը մեր,
Խնդությունից առած թևեր։
Եվ հայացքով իր խնդագին
Նայեց դեմի վեհ արձանին։

Տղան երկա՛ր-երկա՛ր նայեց,
Երկա՛ր նայեց ու ճանաչեց
Պողպատակամ իր պապիկին,
Կանգնած ամուր պատվանդանին։

Կանգնել էր նա հսկա և վեհ,
Անդրդվելի մի լեռան պես,
Հայացքն հառած դեպի դարեր,
Հավերժատես ու անհերթ։

7

Ավտոն ցնցվեց, ավտոն դռռաց,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ:
— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՛ն, հեյ ջա՛ն,
Սլանում ենք ծուխ նման:

Օրորվում է ավտոն, հևում.
Գյուղը սիրուն մնաց հեռվում:
Ճանապարհը կամա՛ց–կամա՛ց
Բարձրանում է լեռն ամպամած...

Ձրե՛ր, ջրե՛ր գիժ ու վարար,
Վշվշալով հոսում են վար,
Ու քեզ հետ են՝ ուր էլ գնաս,
Որ մի՛չտ խմես՝ չհագենաս:

Գրկեց տատը Սանասարին.
— Տե՛ս, հասնում ենք բարձր սարին:
Բա՛րձր սարին, կանա՛չ սարին—
Ձյունը կիսված սեգ կատարին:

Հիանում է Սանասարը,
Իսկապես որ մոտ է սարը:
Բայց այն ի՞նչ է՝ լայն–ընդարձակ,
Տարածվել է, փռվել ճերմակ:

Կարծես լինի սպիտակ ծով,
Ծածկել է նա բլուր ու ձոր:
Եվ թվում է Սանասարին,
Թե դա ձյունն է բարձր սարի:

Մեկ էլ տեսան հենց այդ պահին,
Տեղից շարժվեց հսկա նեբին:
Եվ ահագին ծովն այդ սառած,
Խլրտաց ու շարժվեց սառաջ:

Մի քիչ այն կողմ, ճանապարհին,
Տեսան հոտը գառնուկների։
— Գառնուկներին սիրո՛ւն-սիրո՛ւն,
Տատի՛, տեսնել եմ ես ուզում։

Իջավ տեղից տատը բարի·
— Դե, խենթուկս, չո՛ւտ ցած արի։
Նայիր ինչքան սիրտդ կուզի,
Ծով հոտերին մեր կոլխաղի,
Որ տալիս են երկրին առատ,
Բուրդ ու պանիր, յուղ ու կարագ։

Տեսնելով մեր Սանասարին,
Ծեր հովիվը նստած քարին,
Ելավ կանգնեց, ասաց.— Արի՛,
Երևում է խելո՛ք ես, քա՛ջ:
Բռնած մի գառ գնաց առաջ:
— Թո՛ղ լինի քեզ գառն այս նվեր,—
Ասաց ուրախ հովիվը ծեր:

Սանասարը մեր համարձակ,
Գնաց գրկեց գառը ճերմակ:
Ճերմա՛կ–ճերմա՛կ գառը սիրուն,
Սանասարի ձեռքն էր լիզում:

— Տա՛ռը մատա՛ղ լինի Թոռան,
Բաց թող ճերմակ սիրուն գառան:
Նա ուզում է, որ արձակես,
Տե՛ս, մայում է, խնդրում է քեզ:

Ու թաց թողեց տղան նրան.
— Լավիկն ես դու, ասաց,— գնա՛,
Գնա գառնուկ, ազատ ես դու,
Գնա, չրջիր մեր սարերում:

Տրտինգ տալով գառը վազավ,
Հետո հանկարծ մեկին դարձավ,
Ճերմակ, ինչպես ձյունը սարի,
Ուրախ նայեց Սանասարին:

8

Ավտոն ցնցվեց, ավտոն դուռաց,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ:
— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՛ն, հեյ ջա՛ն,
Սլանում ենք ծաի նման...

Օրորվում է ավտոն, հևում,
Արդեն սարն է, տես, երևում։
Թեք բլուրներ, ձորեր ծաղկած,
Հասա՞նք, հասա՞նք, մի քիչ մնաց։

Անցան ձորեր ու բլուրներ,
Բայց սարն հեռու, հեռու է դեռ։
Վերից կախված մի ժայռ ահա,
Թվում է թե փուլ պիտի գա...

Լարած ուժերը իր վերջին,
Վեր սլացավ ավտոն կրկին։
Որպես կանաչ մի հայելի,
Սարահարթը ժպտաց դեմից։

Հանկարծ կտրեց նրանց ճամփան,
Բարձրահասակ մի նախրապան։
Բարևեց ու սիրով սրտանց
Կաթ խմելու կանչեց նրանց։

Փռվել էր խոր կանաչի մեջ,
Թուխ կովերի նախիրն անվերջ։
— Կա՛ց, տատի ջան, ո՞ւր ենք գնում,
Ես կովե՛րն եմ տեսնել ուզում։

Իջավ տեղից տատը բարի.
— Դե, խենթուկս, շուտ ցած արի։
Նայիր ինչքան սիրուն կուզի
Նախիրներին մեր կոլխոզի,
Որ տալիս են մեզ անհաշիվ
Կարագ ու յուղ, միս ու կաշի։

Նախիրը ողջ այս կովերի,
«Լոռու ցեղն» է հիանալի—

Առաջացած Հայաստանում,
Խիստ կաթնառատ և դիմացկուն,—
Ասաց հպարտ նախրապանը,
Դարձավ դեպի Սանասարը:
— Մի կով հիմա կկանչեմ ես,
Եղա մոտիկ և դու լավ տես:

— Խանո՛ւմ, Խանո՛ւմ, լսիր, Խանո՛ւմ,—
Կովը հանդիստ ետ է նայում:
Նայում է նա, նայում ուրախ,
Մի կանաչ շյուղ բերանից կախ:
Բերանի խոտը ծամելով,
Կովը հանդիստ դալիս է մոտ:

— Գեղեցի՞կ է: Նայեք այստեղ,
Ա՛յ, սա է կովն ապնվացեղ:
Հիսուն ցենտներ կաթ է տալիս,
Մեր Խանումը ամեն տարի:

9

Ավտոն ցնցվեց, ավտոն զոռաց,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ:
— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՛ն, հեյ ջա՛ն,
Սլանում ենք ծուի նման:

Օրորվում է ավտոն, հևում,
Աշխատանքից դաշտն է եռում:
Ծուվի նման կանաչ ու լայն,
Դաշտն է փռվել համայնական:
Հանկարծ ասաց Սանասարը·
— Տատի, էլ չեմ դնա տարը,
Ես կմնամ, ա՛յ, սրանց մոտ,
Որքա՞ն շատ կա ծաղիկ ու խոտ:

Ասես ինչքան մարդ կա գյուղում,
Բոլորն եկել լցվել դաշտում։
Աշխատում են ուրախ երգում,
Է՛ս, ի՞նչ լավ է կյանքը դաշտում։

Տեղից իջավ տատը բարի·
— Դե, խենթուկս, շուտ ցած արի։
Նայիր ինչքան սիրտդ կուզի,
Ծով դաշտերին մեր կոլխոզի,
Որ միշտ առատ ու սրտաբաց,
Մեր մեծ երկրին տալիս են հաց։

Մի քանի կին ու երեխա,
Ավտոյի մոտ շտապ եկան։
Հարց-փորձ արին Սանասարին,
Եվ ասացին·— Մեզ մոտ արի։

Երբ որ նրանք խոտհարք մտան,
Սանասարը մեր զարմացավ։
Այդպիսի բան չէր տեսել նա,
Հունձ էր անում մի մեքենա։
Այնպես հանդիստ ու միալար,
Փռում դեռնին խոտը դալար։
Բայց արի տես գործն այս բարի,
Դուր չեկավ մեր Սանասարին։

Իսկույն վազեց իր տատի մոտ,
— Բա ասիսոս չե՞ն ծաղիկն ու խոտ...

— Չէ՛, խենթուկս, սխալ ես դու,
Էդպես է պետք՝ խոտ են հնձում։
Դու ուզում ես, որ ցուրտ ձմռան
Գառն ու ուլը սովա՞ծ մնան։
Էն կովերը, որ մենք տեսանք,

Էն հորթերը՝ տեսակ-տեսակ,
Նրանք պիտի քաղցից սատկեն,
Թե որ այսօր խոտ չհնձեն։

Համաձայնեց Սանասարը.
— Տատի, հիմա գնանք սարը։

10

Ավտոն ցնցվեց, ավտոն դուրս եկավ,
Մեկ էլ հանկարծ տեղից թռավ։
— Էս ի՞նչ լավ է, հեյ ջա՜ն, հեյ ջա՜ն,
Սլանում ենք ծտի նման։

Օրորվում է ավտոն, հևում,
Դեմից խոր ձորն է երևում։
Դեմքն է ժպտում Սանասարի.
— Տատի արդեն հասա՞նք սարին։

Ամպիկները՝ քուլա-քուլա։
Աղբյուրների ջուրը՝ զուլալ։
Ու երկնքի տակ կապուտակ
Վրաններն են փռվել ճերմակ։

Եվ գետակի ափերին լայն
Կանաչ-կանաչ ջահել անտառ։
Ու անտառում՝ մանուկների
Մի անքանակ
Աշխույժ բանակ։
Ոմանք ծառեր են խնամում,
Ոմանք նստած գիրք են կարդում,
Իսկ ոմանք էլ ահա սարից
Ուրախ-ուրախ ցած են գալիս։

Շատ–շատերն էլ ջրերի մեջ,
Լողանում են, հրճվում անվերջ
Եվ, դուրս գալով, պառկում լուժիչ
Արևի տակ կիսշէջ–կիսդէջ։

Հանկարծ հնչեց ձայնը զանգի
Օրվա ժամն էր այդ մարզանքի։
Այնպես թափով, այնպես արագ,
Լցվեցին լայն հրապարակ...

Բոլորն հագած միատեսակ,
Նույն տարիքի և նույն հասակ։
Բոլորն առույգ, թխամարմին,
Վգիկներին փողկապ կարմիր։

— Վա՛յ, ինչ շատ են։ Ո՞վ են սրանք,
Մարս, մենք էլ այստեղ մնանք...
Իջավ տեղից տատը բարի.
— Դե, խենթուկս, շուտ ցած արի։
Նայիր ինչքան սիրուդ կուզի,
Ճամբարին մեր պիոներների,
Որտեղ այսպես ամեն տարի,
Պիոներներն են անվերջ գալիս։
Աստղում ուրախ, մարզվում անհոգ։
Այստեղ չկա փոշի ու շոգ։
Նրանք այստեղ պիտի մնան,
Մինչև անցնեն շոգերն ամռան։

Այսպես ահա Սոնտասարը
Եկավ հասավ մինչև տարը...



Պատ. խմբագիր՝ Խ. ՀՐԱՉՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ս. ԼԱՓՈՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. ԴԱՓԵՍՅԱՆ

ՎՅԹ 05046։ Պատվեր 632 Տիրաժ 6000

Հանձնված է արտադրության 11 XI 1949 թ.։
Ստորագրված է տպագրության 29 XII 1949թ.։
Տպագրական 1½ մամուլ։

Հայպետհրատի Գրքի տան տպարան, Երևան, Տերյան 91

ԳԻՆԸ 1 Ռ.